ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

ի պատասխան Ձեր 09.02.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքի ավտոկայանատեղերի դրույքաչափերը 2024 թվականի համար սահմանվել են Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» հ.43-Ն որոշմամբ: Վերջինիս ընդունման անհրաժեշտության մասին տեղեկանք-հիմնավորումը հրապարակված է «yerevan.am» կայքի հայտարարություններ ենթաբաժնում, մասնավորապես՝ 2023թ. դրույքաչափերի նկատմամբ բարձրացումն ուղղված է կենտրոնի բեռնաթափմանը:

Ավտոկայանատեղերը կազմակերպվում են Երևան քաղաքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» հ.561 որոշմամբ, իսկ ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանված են Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ.563 որոշմամբ: Ավտոկայանատեղերում կայանված մեքենաների վարորդներին ծառայությունները մատուցվում են նշված որոշումներով սահմանված դրույթների շրջանակներում, մասնավորապես՝ իրականացվում են գծանշումներ, ցուցանակների և ճանապարհային նշանների, տեսահսկման սարքերի տեղակայում և սպասարկում:

Տեղեկացվում է նաև որ մինչև 15 րոպե կայանման համար տեղական վճար չի գանձվում, իսկ 15 րոպեից ավելի կայանելիս մեկ ժամվա համար սահմանված գումարը պետք է վճարվի նախապես՝ կայանելու պահից 15 րոպեի ընթացքում:

Տրանսպորտային միջոցի կայանումը ժամը 22.00-ից մինչև 9.00 անվճար է, իսկ կիրակի օրերին անվճար է նաև ժամը 9.00-ից մինչև ժամը 22.00-ը և տեղական վճար չի գանձվում:

Մեկ ժամվա, օրվա, շաբաթվա, ամսվա կամ ընթացիկ տարվա համար վճարում կատարած վարորդը հնարավորություն ունի մեքենան կայանելու կազմակերպված վճարովի ավտոկայանատեղում:

Ավտոկայանատեղերի վճարի վճարման արտոնություններ են տրամադրված էլեկտրամոբիլների (բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող) սեփականատերերին, ինչպես նաև տեղաշարժման

դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող (կամ փոխադրող) տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ